Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ.
№_____-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ 23/13 ՇԵՆՔԻ Հ.34 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևանի քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 23/13 շենքի 34 բնակարանը՝ 58.8 քմ մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28032014-01-0222 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հովհաննես Ռազմիկի Սարգսյանին:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ**

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ 23/13 ՇԵՆՔԻ Հ.34 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Լենինգրադյան փողոցի հ.23/13 շենքի 58.8 քմ մակերեսով հ.34 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել Հովհաննես Ռազմիկի Սարգսյանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28032014-01-0222 վկայական):

Լենինգրադյան փողոցի 23/13 շենքի 34 բնակարանը՝ 58.8 քմ մակերեսով, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28032014-01-0222 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Հովհաննես Ռազմիկի Սարգսյանը 1995 թվականի հունիսի 28-ին հաշվառվել է որպես Ադրբեջանից բռնի տեղահանված անձ: 2003 թվականի փետրվարի 17-ին հաշվառումից հանվել է՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու նպատակով:

Փախստականների հարցերով զբաղվող պետական լիազոր մարմնի կողմից ՀՀ պետբյուջեի, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին բնակարան չի ստացել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի 05.03.2024թ. թիվ ԱՏ-05032024-99-0280 գրության՝ Հովհաննես Ռազմիկի Սարգսյանի անունով որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում չի կատարվել:

Հովհաննես Ռազմիկի Սարգսյանը համաձայն հարևանների կողմից ներկայացված և Նոր Նորք համատիրության կողմից հաստատված հայտարարության 2000 թվականից առ այսօր բնակվել է Լվովյան 5Ա հասցեում:

Բնակչության պետական ռեգիստրի տվյալներով 07.02.2022 թվականից հաշվառված է Նոր Նորք Լվովյան փողոց 5Ա հասցեում: Քաղաքապետի 29.02.2024 թվականի 762-Ա որոշմամբ քանդվել է վերոնշյալ հասցեում գտնվող քարե շինությունը, որտեղ փաստացի բնակվում էր Հովհաննես Սարգսյանը ընտանիքի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 26.12.2023թ. թիվ 50-Ն որոշման հավելվածի (ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքները՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունել Երևանի ավագանու որոշում:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ**

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ